Մրցույթ՝ «Տաշիրի համար 3ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի 1,12 դրույք դաստիարակի, 0,75 դրույք երաժշտության դաստիարակի 0,5 դրույք մեթոդիստի թափուր տեղի համար:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ ԿԳՄՍ Նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանի որակավորման պահանջներին համապատասխանող անձը:Մրցույթն անցկացվելու է երկու փուլով, թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակած հարցաշարի հիման վրա: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև1),մեկ լուսանկար 3$_{x}$4 չափի,

-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձև4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայության դեպքում),

- համակարգչային գիտելիքներ

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. Նոյեմբերի 11-ից մինչև 2025թ-ի. Դեկտեմբերի 08-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ.դեկտեմբերի 11-ին՝ ժամը 13 : 00-ին, «Տաշիրի համար 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Տաշիր, Խանջյան 3/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094241199 հեռախոսահամարով: